

## ՄՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՄ ՋՐԵՐ

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է ազգային ցանցում ընդգրկված 119 դիտակետում, այդ թվում՝ 25 շատրվանոց հորատանցք, 35 չշատրվանոց հորատանցք, 12 գրունտային ջրհոր և 47 բնաղբյուր: Դիտակետերում կատարվել են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի չափումներ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Ստորերկրյա ջրերի որակի մոնիթորինգ իրականացվել է 54 դիտակետերում՝ որոնցից յուրաքանչյուրում որոշվել է շուրջ 40 ցուցանիշ (հիմնական անիոններ և կատիոններ, աղային ռեժիմի տարրեր, մետաղներ:


### Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգ իրականացվել է 2 բնաղբյուրում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ: Դիտակետերը գտնվում են Դիլիջան համայնքի Հաղարծին գյուղում:

N2059 դիտակետում ծախսի տատանումներ գրեթե չեն եղել (0.13-0.12 լ/վ):

N2058 դիտակետում նկատվել է ծախսի կրկնակի աճ՝ 0.4 լ/վ -ից հասնելով 0.8 լ/վ:

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգ իրականացվել է 1 դիտակետում (N2058), որտեղ հանքայնացման, կոշտության, ինչպես նաև նիտրատ, քլորիդ, սուլֆատ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՄԹԿ-ները:



Գծապատկեր 1. Հյուսիսային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները

### Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածք

Ախուրյանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 40 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:

Ախուրյանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում՝ Եղեգնուտի, Վարդանաշենի, Տարոնիկի, Ակնաշենի, Ապագայի, Արագափի բոլոր հորատանցքերում նկատվել են մակարդակների իջեցումներ 0.08մ-1.56մ: Մակարդակի բարձրացումներ դիտարկվել են միայն Լուսազյուղի N2022 (գրունտային ջրհոր) և Այգեշատի N2104 դիտակետերում, ինչը պայամանավորված է ռոռզման հետ:

Տարոնիկի N2002, Ջրառատի N2021, Գայի N1521 և Ակնաշենի N2001 շատրվանող հորատանցքերում ծախսի իջեցումներ են դիտարկվել 0.01-1.28լ/վ-ով: Տարոնիկի N2002 դիակետի ծախսը հունիս ամսին կազմել է 0.03լ/վ, իսկ Ջրառատի N2021 դիտակետում ծախսը 4.73-ից նվազել է մինչև 3.45լ/վ:


Բամբակաշատի և Հայկավանի (N2024, N2025) դիտակետերում ստորերկրյա ջրերի մակարդակի իջեցումները հասնում են 0.22մ-ի:



Արարատյան դաշտի նախալեռնային գոտու Արտենի N2081՝ և Մյասնիկյան N2082 համայնքների դիտակետերում նույնպես նկատվում են ստորերկրյա ջրերի մակարդակների իջեցումներ 0.16-0.24մ-ով, իսկ Արագածավանի N2080, Արտամետի N2083 դիտակետերում մակարդակների համեմատաբար կայուն վիճակ է դիտարկվել:

Աշոցքի N2038, N2039, N2040 դիտակետերում նկատվում են ծախսի իջեցումներ, բացառությամբ Յողամարզի N2077 դիտակետում, որտեղ դիտվել է ծախսի կայուն վիճակ: Ծախսի համեմատաբար կայուն վիճակ է դիտվել նաև N2035 և N2030 դիտակետերում: Գյումրի քաղաքի N2031 դիտակետում շարունակվում է աղբյուրի ծախսի աճը՝ հասնելով մինչև 1.23 լ/վ, իսկ N2037 դիտակետում ծախսը նվազել է անշան քանակությամբ՝ հասնելով 6.13 լ/վ:


Առափի գյուղի N2042 գրունտային ջրհորում մակարդակը իջել է 0.13մ-ով՝ հասնելով -1.41մ-ի, իսկ Ախուրյանի N2043 գրունտային ջրհորում մակարդակը իջել է՝ հասնելով մինչև -10.01մ-ի:


Ախուրյանի ՋԿՏ-ի 18 դիտակետում մայիս և հունիս ամիսներին իրականացվել է որակի մոնիթորինգ: N2042 գրունտային ջրհորի հանքայնացումն ու սուլֆատ իոնների պարունակությունը, N2022 գրունտային ջրհորի հանքայնացումը, ինչպես նաև N2035 աղբյուրի նիտրատ իոնի պարունակությունը գերազանցել են համապատասխան ՍԹԿ-ները:






**Գծապատկեր 3. Ախտորյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերի ծախսերի մակարդակների փոփոխությունները**







**Փձապատկեր 4. Ախուրյանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերի մակարդակների փոփոխությունները**




**Փձապատկեր 5. Ախուրյանի ՋԿՏ-ի փրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները**



**Փձապատկեր 6. Ախուրյանի ՋԿՏ-ի դիտակետերի ջրում հանքայնացումը**



Գծայատկեր 7. Ախտորյանի ՋԿՏ-ի դիտակետերի ջրում նիտրատ իոնի պարունակությունը



Գծայատկեր 8. Ախտորյանի ՋԿՏ-ի դիտակետերի ջրում սուլֆատ իոնի պարունակությունը

### Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 32 դիտակետում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Հրազդանի ՋԿՏ-ի Արարատյան արտեզյան ավազանի հատվածում գրեթե բոլոր շատրվանող հորատանցքերում ծախսերը նվազել են: Դաշտավան, Հովտաշեն, Ջրահովիտ, Միս համայնքների N1526, N2008, N2007, N1536 դիտակետերում ջրերի ծախսերը նվազել է 0.02-0.2լ/վ սահմաններում, իսկ Միս N1535 դիտակետում դիտվել է ծախսի կայուն վիճակ: Մասիսի N1519 դիտակետում շատրվանող հորատանցքի ծախսը 5.64 լ/վ-ից նվազել է՝ հասնելով 5.14լ/վ, իսկ Հովտաշենի N2053 դիտակետում՝ 0.99 լ/վ-ից հասել է 0.5լ/վ:


Միս համայնքի N78 և Հայանիստի N2005 դիտակետերում նկատվում է ջրի մակարդակի իջեցումներ 0.14-0.27մ սահմաններում:

Արարատյան դաշտի նախալեռնային գոտու՝ Արագածի N2085, Աղավնատան N2087, Լեռնամերձի N2088, Փարպիի N2119 դիտակետերում ջրի մակարդակներն


իջնում են, իսկ Դոդսի N2086 և Կարբիի N2089 հորատանցքերում մակարդակները համեմատաբար կայուն են:

Հրազդանի ՋԿՏ-ի Ղազարավանի, ք.Երևանի, Սուլակի N755 դիտակետի աղբյուրի ջրի ծախսը կայուն է: Բջնի N246, Սուլակի N1832 դիտակետերի ծախսի ավելացումներ են նկատվել, ամենաբարձր ծախսերը եղել է հունիս ամսին՝ 2.67լ/վ(N246), 9.48լ/վ(N1832): Ապարանի N2051, N2107, Բուժականի N2105 դիտակետերում ծախսի ավելացումներ են նկատվել: Մակարդակների բարձրացում դիտվել է Նիգավանի N2010, N2011 դիտակետերում:


Հրազդանի ՋԿՏ-ի 13 դիտակետում մայիս և հունիս ամիսներին իրականացվել է որակի մոնիթորինգ: N1519, 2007 և 2053 շատրվանող հորատանցքերում հանքայնացումը գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն, N2007 դիտակետում գերազանցվել է նաև սուլֆատ իոնի ՍԹԿ-ն:





Պատկեր 9. Հրազդանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ծախսերի փոփոխությունները




Պատկեր 10. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 11. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերի մակարդակների փոփոխությունները




Գծապատկեր 12. Հրազդանի ՋԿՏ-ի չշատրվանոց հորատանցքերի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 13. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրերների մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 14. Հրազդանի ՋԿՏ-ի դիտակետերի ջրում հանրայնացումը



Գծապատկեր 15. Հրազդանի ՋԿՏ-ի դիտակետերի ջրում սուլֆատ իոնի պարունակությունը





## Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 15 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:


Վարդենիս, Վաղաշեն, Գանձակ, Դարանակ համայնքների N1809, N2090, N2013, N2095 շատրվանող հորատանքերում ապրիլ ամսից նկատվել է ջրի մակարդակների և ծախսերի բարձրացում: Վարդենիսի N1811 դիտակետում նկատվում է մակարդակի և ծախսի կայուն ռեժիմ:

Լիճքի N2101 հորատանցքի մակարդակը բարձրացել է: Ակունքի N31 և N902 դիտակետերում նկատվել է ջրի ծախսերի աճ: Ակունք, Լիճք համայնքների N1053, N2100 դիտակետերում նույնպես նկատվել են ծախսերի ավելացումներ: Աղբերքի N2091 դիտակետում նկատվել է աղբյուրի ծախսի կայուն ռեժիմ, իսկ Խաչաղբյուրի N2093 և Գավառի N2014 դիտակետերում աղբյուրների ծախսը նվազել են համապատասխանաբար 0.15 և 0.30 լ/վ-ով:


Սևանի ՋԿՏ-ի 8 դիտակետում մայիս ամսին իրականացվել է ջրի որակի մոնիթորինգ: Նշված դիտակետերում հանքայնացումը, ինչպես նաև նիտրատ, քլորիդ, սուլֆատ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




**Գծապատկեր 16. Սևանի ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները**




Գծապատկեր 17. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի ծախսերի փոփոխությունները




Գծապատկեր 18. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 19. Սևանի ՋԿՏ-ի շատրվանոց հորատանցքերում ջրի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 20. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերի ջրում հանքայնացումը



Գծապատկեր 21. Սևանի ՋԿՏ-ի դիտակետերի ջրում նիտրատ իոնի պարունակությունը

### Արարատյան ջրավազանային կառավարման տարածք

Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 23 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի, ծախսի և մակարդակի չափումներ:



Մալիշկա, Եղեգնաձոր և Գառնի համայնքների N502, N787, N2048 աղբյուրներում գրանցվել են ծախսերի ավելացում: Համեմատաբար կայուն ռեժիմ է նկատվում Ագարակաձորի N785, Գառնիի N2045 դիտակետերում: Կեչուտի N2060 դիտակետում ծախսը 7.37լ/վ-ից նվազել է՝ հասնելով 2.56լ/վ, իսկ Զեղեայի N2050 դիտակետում՝ նվազել է աննշան:

Արարատյան դաշտի հարավ-արևելյան մասի՝ Վեդի, Արմաշ, Եղեգնավան, Լուսառատ և Արարատ համայնքների N2006, N2075, N2065, N2074 N2076 դիտակետերում նկատվում են մակարդակների բարձրացում, իսկ Սուրենավանի N2067 դիտակետում ծախսը ավելացել է՝ հասնելով 1.01լ/վ:


Դալար գյուղի N2072 և Արտաշատ քաղաքի N2073 դիտակետերում նկատվում են գրունտային ջրերի մակարդակների իջեցումներ: Շատրվանոց հորատանցքերի

դիտակետերում հիմնականում շարունակվում են ջրի ծախսի նվազումները: Մրգավետի N2052, Արտաշատի N2069 հորատանքերում նույնպես նկատվել են ջրի մակարդակների իջեցումներ:


Արարատյան ՋԿՏ-ի 10 դիտակետում մայիս ամսին իրականացվել է որակի մոնիթորինգ: Սուրենավան համայնքի N2067 և ք. Արտաշատի N2069 շատրվանող հորատանքերում հանքայնացումը, իսկ N2067 դիտակետում քլորիդ և սուլֆատ իոնների պարունակությունները գերազանցել են համապատասխան ՄԹԿ-ները:




**Գծապատկեր 22. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյունների ծախսերի փոփոխությունները**




**Գծապատկեր 23. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները**




**Գծապատկեր 24. Արարարտյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում ծախսերի փոփոխությունները**




**Գծապատկեր 25. Արարարտյան ՋԿՏ-ի չշատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները**




**Գծապատկեր 26. Արարարտյան ՋԿՏ-ի գրունտային ջրհորներում մակարդակների փոփոխությունները**



**Փճապատկեր 27. Արարատյան ՋԿՏ-ի դիտակետերի ջրում հանքայնացումը**



**Փճապատկեր 28. Արարատյան ՋԿՏ-ի դիտակետերի ջրում քլորիդ իոնի պարունակությունը**



**Փճապատկեր 29. Արարատյան ՋԿՏ-ի դիտակետերի ջրում սուլֆատ իոնի պարունակությունը**



## Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա ջրերի քանակի մոնիթորինգն իրականացվել է 7 դիտակետում, որտեղ կատարվել են ջրի ջերմաստիճանի և ծախսի չափումներ:


Գորայք, Սպանդարյան, Շաքի և Անգեղակոթ համայնքների N529, N537, N532, N1175 դիտակետերում դիտարկվել է ծախսերի համեմատաբար կայուն վիճակ:

Գորիսի N1399 և Անգեղակոթի N1323 դիտակետերում նկատվում է ծախսերի աննշան աճ:


Հարավային ՋԿՏ-ի 4 դիտակետում հունիս ամսին իրականացվել է որակի մոնիթորինգ: Նշված դիտակետերում հանքայնացումը, նիտրատ, սուլֆատ, քլորիդ իոնների պարունակությունները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



**Գծապատկեր 30. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսերի փոփոխությունները**



Պճապատկեր 31. Հարավային ՋԿՏ-ի դիտակետերի ջրում հանքայնացումը



Պճապատկեր 32. Հարավային ՋԿՏ-ի դիտակետերի ջրում նիտրատ իոնի պարունակությունը